ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 9, 1958 Общественные науки

Հ. Եղանյան

ԽԱԼԻՍԵԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՐԱՆՈՒՄ

1957 թ. նոյեմբերին իրանական Մեջլիսի ֆինանսների և գյուղատնտեսության հանձնաժողովների միացյալ նիստը հաստատեց մի օրինագիծ, որի նպատակն էր մասնավոր անձանց վաճառել պետությանը պատկանող հողերը։

Իրանում գոյություն ունեցող հողատիրության ձևերից մեկը հանդիսանում է պետական հողատիրությունը՝ խալիսեն։

Հողային սեփականության այդ ձևը կոչվում է խալիսե կամ, ավելի ճիշտ, «խալիսեջաթե դովլաթի» (خالصجات دولتی — պետական խալիսեներ) այն պատճառով, որ դրանք միայն ու միայն պետության սեփականությունն են և դրանցից ստացվող ամբողջ եկամուտը պատկանում է պետությանը։

Պետական հողային սեփականության ինստիտուտը երկար ժամանակ համառորեն պայքարում էր մասնավոր հողատիրության դեմ։ Խալիսե հողերի մասսան մերթ աճում էր, մերթ նվազում՝ նայած տնտեսական և քաղաքական իրադարձություններին։

Համաձայն իսլամի շարիաթի դոգմաների, առանձին մարդիկ չեն կարող հողի սեփականատեր լինել. հողը պատկանում է աստծուն, իսկ քանի որ երկրում նրան փոխարինողը շահն է, ապա և հողը կարող է պատկանել միայն շիաների համայնքին և նրանց գլխում կանգնած շահին։

Դեռևս 1853 թ. Կ. Մարքսը Ֆ. Էնգելսին գրած իր մի նամակում, անդրադառնալով Ֆրանսուա Բերնիեի գրքից ստացած իր տպավորություններին, նշում էր, որ Բերնիեն, խոսելով Թուրքիայի, Իրանի և Հնդկաստանի մասին, Արևելքի բոլոր հողային կարգի հիմքը «իրավացիորեն այն է համարում, որ այնտեղ գոյություն չունի հողի մասնավոր սեփականություն։ Դա է իսկական բանալին նույնիսկ արևելյան երկնքի նկատմամբ»։

Արևելքում իշխող հողատիրության մասին Մարքսը «Կապիտալ»-ում գրել է. «Պետությունն այստեղ գերագույն հողատերն է։ Գերիշխանությունն այստեղ ազգային մասշտաբով համակենտրոնացված հողային սեփականությունն է։ Բայց այս դեպքում ոչ մի մասնավոր հողային սեփականություն չկա, թեև կա հողի ինչպես մասնավոր, այնպես էլ համայնական տիրում ու օգտագործում»։

Հողի նկատմամբ պետության սեփականատիրական իրավունքի առկայության պարագայում համայնական հողատիրությունը հակադրվում էր խոշոր մասնավոր հողատիրությանը, բայց ոչ որպես միայն հողօգտագործման իրավունք ունեցող մի ինստիտուտ, այլ մի ինստիտուտ, որն իր մեջ պարունակում էր թե հողօգտագործման և թե հողը տնօրինելու իրավունքը։ Հենց այդ

---

1 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Հասբնտիր նամակներ, հատ. I, էջ 91։
2 Կ. Մարքս, Կապիտալ, հատ. III, 2-րդ մաս, էջ 329։

պատճառով էլ, արտաքուստ, Իրանում մասնավոր հողատիրություն չէր կարող լինել, միայն հողի տերը՝ շահը իրավունք ուներ հողը վարձով տալ որևէ մեկին և դրա դիմաց շարիաթի օրենքների համաձայն ստանալ համապատասխան հարկ։

Բայց այս բոլորը միայն ծում էր շարիաթի սահմաններում։ Իրականության մեջ դրությունը միանգամայն այլ էր։

Իշխանությունը փաստորեն գտնվում էր տեղական դեկավար պաշտոնյաների և հոդի խոշոր վարձակալների ձեռքում, որոնք իրենց տրամադրության տակ ունեին նաև զինված ուժեր, և չնայած իրավաբանորեն հողը պատկանում էր պետությանը, բայց փաստորեն նրան տիրում էին խանները։ Տեղական իշխանությունները և խոշոր վարձակալները չէին ենթարկվում կենտրոնական կառավարությանը, որի հետևանքով էլ ժամանակի ընթացքում նրանք փաստորեն զավթեցին իրենց տրամադրության տակ եղած հողերը և ժառանգաբար դարձան կալվածատերեր։

Պետությունը հողերից գանձվող իր հարկերը ապահովելու համար աստիճանաբար սկսում է հաճախակի խախտել շարիաթի օրենքները և խոշոր վարձակալներին հողը իրենց ժառանգներին փոխանցելու իրավունքի փաստաթղթեր տալ, կամ էլ զանազան «փիշքաշներ» (նվերներ) ստանալով՝ օրինականացնել ուրիշներից բռնագրավված հողերի յուրացումը։ Բայց ժամանակի ընթացքում այս ինքնատիպ հողատիրությունը, մի քայլ ևս առաջ գնալով, ձեռք բերեց հողը օտարելու իրավունք։

Այսպիսով՝ հող ձեռք բերելու մրցավազքը հասցրեց այն բանին, որ տեղի ունեցավ հողերի արտակարգ կուտակում առանձին մարդկանց ձեռքում. խանները վերածվեցին խոշոր հողատերերի։ Օրինակ՝ Նասր էդ-Դին շահի եղբայր՝ Զիլ օլ-սուլթանի ունեցվածքը Իսֆահանի նահանգում հաշվվում էր մոտ 50 միլիոն թուման[1]։ Նրա գյուղերի թիվը հասնում էր երկու հազարի՝ մոտ մեկ միլիոն բնակչությամբ, իսկ Սադրազամ Ամթաբեկը ուներ մոտ 1200 գյուղ[2]։

XIX դարը հանդիսանում է խալիսների աստիճանական լիկվիդացման շրջան. լիկվիդացիայի պրոցեսը պայմանավորված էր օտարերկրյա կապիտալի մուտքով և Իրանի կիսագաղութացումով։ 1889 թ-ականին Նասր էդ-Դին շահը հատուկ դեկրետով լիկվիդացրեց պետական տնտեսությունները և բավականին ցածր գներով, այսինքն՝ ապագա 15 տարվա հարկերի գանձումով, վաճառեց հողերը մասնավոր անձանց։ Նասր էդ-Դին շահի մինիստր Ամին օլ-սուլթանի կողմից համապատասխան հրամաններ արվեցին հողերի այդ փոխանցումների մասին։ Այդ խալիսները հայտնի դարձան որպես «խալիսեջաթե էնթեգալի» (خالصجات انتقالی — փոխանցելի խալիսներ)։ Նոր տերերը կարող էին իրենց սեփականություն դարձած հողերը փոխանցել իրենց ժառանգներին, բայց իրավունք չունեին այն վաճառել որևէ երրորդ անձնավորության։ Դրանից հետո խալիսե հողերի տարածությունը բավական նվազեց։

1906 թ. կոնստիտուցիայի հաստատման ժամանակ գոյություն ունեցող խալիսե հողերը, ըստ իրենց ծագման, բաժանվում էին երեք խմբի. առաջին՝

---

[1] ماکز اده تاریخ انقلاب مشروطیت ایران جلد دوم ص ۲۶۳. Մալեքզադե, Իրանի սահմանադրական ռևոլյուցիայի պատմությունը, Թեհրան, 1950, հատ. 2, էջ 263։

[2] Ампнем, Мамед Али шах. Александрополь, 190.), стр. 133.

Նադիրյան հողային գրանցումներ (դաֆթարե ռողբեյե Նադիրի دفتر رقبه نادری), որոնց մեջ մտնում էին Նադիր շահի օրոք (1736—1747) բռնագրավված հողերը. երկրորդ՝ մոհամեդշահյան հողային գրանցումներ (դաֆթարե ռողբեյե մոհամեդի — دفتر رقبه محمدی) (1834—1848) և երրորդ՝ նասիրյան հողային գրանցումներ (դաֆթարե ռողբեյե նասիրի — دفتر رقبه ناصری) (1848—1896)։ Վերջին երկու խմբերի մեջ մտնում էին այն հողերը, որոնք բռնագրավվել էին հարկեր չվճարելու դիմաց և այլ պատճառներով։ Այդ հողերը մեծ մասամբ պետության կողմից չէին կառավարվում։ Դրանց մի մասը ցմահ կամ ավելի կարճ ժամկետով փոխանցելու իրավունքով տրված էր առանձին մարդկանց։ Այդպիսի հողերը հայտնի են դառնում «խալիսեջաթե էնթեղալի» կամ «վագուզարի» (փոխանցելի խալիսներ — خالصجات انتقالی یا واگذاری) անունով։ Կոնստիտուցիայի հաստատումից հետո, 1325 (1907—1908) թ. կիրառված առաջին միջոցառումներից մեկը կոնվերսիոն տարիֆի վերացումն էր «խալիսեջաթե վագուզարիի»՝ փոխանցելի խալիսենների նկատմամբ, որի հետևանքով զգալի չափով աճեցին նատուրալ և կանխիկ ձևերով գանձվող եկամուտները։

Խալիսի մյուս ձևը «խալիսեջաթե թիուլին» (خالصجات تیولی) էր, խալիսներ, որոնք տրվել էին որպես թիուլ՝ մեծ մասամբ զինվորական կամ այլ պետական ծառայությունների դիմաց։ Այս տիպի խալիսները հատկապես քոչվոր ցեղերի բնակելի շրջաններում էին տարածված։ Վերջապես կային նաև դիվանի խալիսներ (خالصجات دیوانی). դրանք այն հողերն էին, որոնք ամբողջությամբ մնում էին պետության տրամադրության տակ՝ հակառակ փոխանցելի խալիսներին։

Խալիսե հողերից ստացված եկամուտների մասին կարելի է գաղափար կազմել հետևյալ փաստից։ Միլիսպոն, խոսելով Ռիզա շահի իշխանության սկզբում այդ հողերի դրության մասին, գրում է, որ դրանք իրենցից ներկայացնում էին «ընդարձակ և բազմաթիվ գյուղեր, ցանքատարածություններ և արոտավայրեր, տարածված երկրի բոլոր մասերում, որոնց տարեկան արտադրանքը ներկա պայմաններում կազմում էր ավելի քան 12 միլիոն դրան»[1]։

Ռիզա շահը իր իշխանության տարիներին անդրադարձավ նաև խալիսե հողերի հարցին։ Ռիզա շահի ագրարային միջոցառումները ուղղված էին կալվածատիրական հողատիրության ամրապնդման և օրինականացման նպատակին։ Հետևաբար խալիսե հողերի վերաբերյալ հրատարակած օրենքները, որոնց մասին մենք այժմ հանգամանորեն կխոսենք, նույնպես պիտի դիտել այդ տեսանկյունից։

Որո՞նք էին այդ օրենքները։ 1927 թ. վերջերին պետական հողերը վաճառելու վերաբերյալ մի օրենք հրատարակվեց, որի ներածականում ասվում էր. «Կառավարության կարծիքով պետական կալվածքների կառավարումը պետության կողմից, կամ նրանց վարձով տալը, այնքան էլ օգտավետ և նպատակահարմար չէ, որքան նրանց տիրումը և շահագործումը մասնավոր անձանց կողմից»։ Ելնելով դրանից, օրենքի առաջին հոդվածը ֆինանսների մինիստրությանը թույլատրում էր պետական հողերը, իրենց ջրի ակունքներով

[1] *A. C. Millspaugh.* The Financial and Economic situation of Persia, Imperial Persian Government, Washington, 1926, page 36.

հանդերձ վաճառել իրանական հպատակներին», բացառելով հողերի որոշ կատեգորիաներ, որոնք պետական նշանակություն ունեին։

Օտարված պետական կալվածքների հարկերի մասին հրապարակված 1928 թ. օրենքը մասնավոր անձանց սեփականություն համարեց այն կալվածքները, որոնք շարունակաբար գտնվում էին այդ մարդկանց ձեռքում վերջին 30 տարիների ընթացքում, անկախ թե կառավարությունը հավակնություններ ուներ այդ հողերի նկատմամբ, թե ոչ, և այն կալվածքները, որոնք 20 տարիների ընթացքում գտնվել են մասնավոր անձանց ձեռքում և այդ ժամանակամիջոցում կառավարությունը ոչ մի ձևով չի միջամտել այդ հողերի կառավարման գործին։

Այնուհետև 1931 թ. մի օրենք անցկացվեց, որն առանձին մարդկանց թույլ էր տալիս գնել փոխանցելի խալիսները։ Այս օրենքի համաձայն, հողն օգտագործողը, վճարելով տասը տարվա ընթացքում, կարող էր հողի սեփականատերը դառնալ։

Խալիսե հողերի վաճառքի վերաբերյալ Ռիզա շահի միջոցառումները մինչև իսկ այն դեպքերում, երբ նա այս կամ այն նպատակով աշխատում էր զարգացնել մանր հողատիրությունը, երկրում գոյություն ունեցող կարգերի հետևանքով դատապարտվում էին անհաջողության և հողերը անցնում էին խոշոր կալվածատերերի ձեռքը։ Դրա լավագույն օրինակն է հանդիսանում Սիստանի պետական հողերի վաճառքի պատմությունը։

1932—1933 թթ. որոշում կայացավ Սիստան նահանգի խալիսե հողերի վաճառման մասին։ Այդ բանում կառավարությունը մասնավորապես շահագրգռված էր այն պատճառով, որպեսզի այդ անմարդաբնակ վայրերը բնակելի դարձնելով ամրացնի Ավգանիստանի սահմանամերձ շրջանները։ Ամբողջ հողը բաշխվեց առանձին բաժինների՝ ամեն մեկը 36 հազար քառակուսի զարի (կամ դաղի) չափով։ Այնուհետև մեկից հարյուրքսան բաժին կազմող հողամասեր տրվեցին գյուղացիներին, սարդարներին (տեղի ցեղապետներին) և այլ մարդկանց, նպաստ հող մշակելու նրանց հնարավորությանը։ Պետությունը ամեն մի բաժնից տարեկան գանձում էր 50 ռիալ։ Յուրաքանչյուր գյուղացու միջին թվով հասավ մոտավորապես 4 հեկտար հող։ Դա տևեց 4—5 տարի։ Տեղի ունեցան մեծ թվով բռնագրավումներ և այլն։ Կառավարությունը, 1937 թ. հունիսին չեղյալ համարելով նախկին հողաբաժանումները, նոր հրաման արձակեց, որի համաձայն Սիստանի խալիսե հողերը պիտի բաշխվեին նորից 36 հազար քառակուսի դաղ տարածություն ունեցող բաժիններով։ Հրամանում նշված էր, որ յուրաքանչյուր բաժնի վրա կարելի էր ցանել տարեկուն 600 կիլո ցորեն «դու այնշիա» հիման վրա, որը նշանակում էր հողի կեսը թողնել չցանված։ Ամեն մի բաժնի գինը որոշվեց 500 ռիալ, եթե վճարվեր միանվագ և կանխիկ կամ 800 ռիալ, եթե վճարվեր 10 տարում։ Տասը բաժնից ավելի հող կարելի էր վաճառել միայն այն անձանց, ովքեր արդեն մշակում էին տասը բաժնից ավելի։

Հողերի վաճառքը կատարվում էր գյուղատնտեսության մինիստրության Սիստանի պաշտոնյաների միջոցով։ Հենց սկզբից տեղի ունեցան բազմաթիվ խախտումներ և բռնագրավումներ, հատկապես պետական պաշտոնյաների կողմից։ Բողոքների քանակը այնպիսի չափերի հասավ, որ 1939—1940 թթ. ֆինանսների մինիստրությունը ստիպված եղավ միջամտել և մի հանձնաժողով

նշանակել տեղում խնդիրը ստուգելու համար։ Բայց այդ հանձնաժողովի աշխատանքներից արդյունք չստացվեց, և Ռիզա շահը հրամայեց մի նոր հանձնաժողով կազմել, ֆինանսների, արդարադատության, ներքին և պատերազմական մինիստրությունների ներկայացուցիչներից, ամբողջ պրոցեսը վերանայելու համար։ Ռիզա շահի նշանակած այդ հանձնաժողովը առաջարկեց Սիստանի խալիսե հողերը բաժանել հինգ հեկտարանոց մասերի և վաճառել տեղի բնակիչներին, յուրաքանչյուր հեկտարը 250 ռիալով՝ 10 տարվա վճարման ժամկետով, կամ 160 ռիալով, եթե վճարվի կանխիկ և անմիջապես։ Հանձնաժողովը առաջարկեց նաև ստեղծել Սիստանի զարգացմանը նպաստող մի ընկերություն, որի կապիտալի կեսը պետք է ներդնեին մասնավոր անձինք։ 1941 թվականին դրությունն էլ ավելի վատացավ և գյուղացիները մասսայաբար սկսեցին հեռանալ Սիստանից, մասամբ թողնելով իրենց երկիրը և գաղթել Ավղանիստան։

1941 թ. ապրիլին մի նոր հանձնաժողով ուղարկվեց Սիստան, որն իր զեկուցագրում դատապարտեց մանր հողատիրությունը, պատճառաբանելով, որ Սիստանի բնակչությունը քիչ է, գյուղացիները տգետ են և չունեն անհրաժեշտ կապիտալ ու միջոցներ և այլն։ Հանձնաժողովը հայտարարեց, որ գյուղացիներին պետական վարկեր բաց թողնելը կիրառելի չէ, այլ պետք է վարկեր բաց թողնել խոշոր կալվածատերերին, որպեսզի նրանք այգիներ տնկեն, գյուղատնտեսության մեխանիզացիա մտցնեն և այլն։ Հանձնաժողովը առաջարկեց, որ Սիստանի խալիսե հողերը վաճառվեն ամբողջ գյուղերով կամ խոշոր կտորներով և ոչ թե փոքր հողակտորներով՝ ինչպես կատարվել էր մինչև այդ և այն էլ ոչ անպայման տեղի բնակիչներին։

1944 թ. հունիս-հուլիս ամիսներին մի նոր զեկուցում ներկայացվեց կառավարությանը՝ ֆինանսների և գյուղատնտեսության մինիստրության կողմից։ Զեկուցման մեջ նշվում էր, որ սկսած 1938—1939 թթ. 179 կտոր հողամաս վաճառվել է կանխիկ և 25 083 հողամաս ժամկետային կարգով։ Հողերի այդ վաճառքից ստացվել էր ընդամենը 8 348 708 ռիալ։ Մոտ 441 հողամաս տրրվել էր օգտագործման՝ արտադրանքից պետությանը համապատասխան բաժին հատկացնելու պայմանով, որը կոչվում էր պետական կալվածատիրական բաժին (բահրեյն մալիքանեյն դովլաթի — بهره مالکانه دولتی)։

Իսկ ինչ ստացվեց հողերի այդ բաժանումից։ Սիստանի խալիսե հողերի բաժանման այս ամբողջ պատմությունը ցույց է տալիս, որ գյուղացիներին հող տալու քողի տակ, ինչպես միշտ, օգտվեցին նորից խոշոր հողատերերը, ֆեոդալներն ու պետական պաշտոնյաները. այս են ապացուցում նաև ամերիկյան տխրահռչակ 4-րդ կետի «օգնության» Իրանի ներկայացուցիչ Հարիսի հետևյալ խոսքերը, որ Սիստանում «հողը աստիճանաբար անցավ ցեղապետների և մյուս հզոր հողատերերի ձեռքը»[1]։ Անգլիացի Լամբտոնը գրում է. «Ճնշման ու կաշառքի գործադրումով գյուղացիները ուժեղ կերպով էքսպրոպրիացիայի ենթարկվեցին. հաճախ միջամտությունը ջրի բաշխման գործին և ջուր կարելը գյուղացու հողը դարձնում էր անարժեք։ Հող ունեցող գյուղացին, այսպիսով, ստիպված էր լինում վաճառել իր հողը ցածր գնով, կամ թե բացարձակապես լքել հողը, որը հետո բռնագրավվում էր։ Բացի այդ, 1948 թ.

[1] „Foreign Agriculture", 1953 feb., page 34.

երը երկրում սով էր տիրում, բաժինները վաճառվում էին նոմինալ դնով։ Զանազան դեպքերի ծայլման հետևանքով Միստանի հողերի մեծ մասը նորից գտնվում է խոշոր կալվածատերերի ձեռքում[1]։

Խալիսն հողերի վաճառքի տեսակետից շատ կարևոր են նաև հետևյալ օրենքները։ 1934 թ. իրանական կառավարությունը նոր, հատուկ օրենք հրատարակեց խալիսն հողերի վաճառքի մասին։ Մեջլիսի 1934 թ. հունվարի 7-ի նիստում հանդես գալով օրենքի վավերացման օգտին, ֆինանսների մինիստր Դավարը հայտարարեց. «Պետք է նկատի ունենալ այն նպատակը, որ մենք հետապնդում ենք այս օրինագիծը ներկայացնելով...։ Առաջինը գյուղատնտեսական բանկին կապիտալ տրամադրել, երկրորդ պետական կալվածքները տալ մասնավոր մարդկանց, որպեսզի դրանք ավելի բարեկարգ վիճակում լինեն։ Այս երկու նպատակները իրականացնելու համար կառավարությունը ավելի լավ եղանակ չի տեսնում։ Թե բնակչության որ խավերին պիտի վաճառվեին հողերը, երևում է պրեմիեր մինիստր Ֆորուղիի ելույթից, որն Մեջլիսում օրենքը վավերացնելու ժամանակ հայտարարեց. «Այս հարցը վերաբերում է մանր հողատերերին։ Ես միանգամայն համաձայն եմ, որ պետք է իրախուսել մանր հողատերերին և որ, ընդհանրապես, ավելի լավ կլիներ եթե մանր հողատերերը երկրում մեծամասնություն կազմեին... Բայց դա, իհարկե, չի նշանակում, թե խոշոր կալվածատերերը օգուտ չեն բերում... չի կարելի վերջնականապես եզրակացության գալ, թե որոնք են ավելի օգտավետ՝ մանր հողատերերը, թե խոշոր կալվածատերերը...։ Ինչպես հայտնի է բոլորին, մանր հողատերերը հանդիսանում են բնակչության ամենապահպանողական խմբերից մեկը։ Բրա համար էլ պետք է ունենալ նաև խոշոր հողատերեր, որոնք կարող են կիրառել գյուղատնտեսական ժամանակակից մեթոդներ։ Նույն միտքը արտահայտեց նաև Դավարը. «Ինչ վերաբերում է այս կալվածքները խոշոր հողատերերի ձեռքը անցնելու հարցին, ապա այդ կարելի է միայն ողջունել։ Ինչ փաս կարող է լինել այն բանից, որ այդ կալվածատերերը վարկեր ստանան և հող տանեն իրենց կալվածքների բարեկարգման մասին։ Մյուս կողմից էլ դա չի անդրադառնա մանր հողատերերի դրության վրա[2]։

Օրենքով սահմանված վաճառքի պայմանները և գինը ցույց է տալիս, որ պետական հողերը կարող էին դնել կամ հարուստ կալվածատերերը, կուլակները, կամ խոշոր առևտրականները, բայց ոչ միջակ գյուղացիությունը, էլ չենք խոսում չքավորի մասին։ Ի՞նչ պայմաններ էր սահմանում այդ օրենքը։ Օրենքի 4-րդ հոդվածում ասվում էր. «10 հազար ռիալից պակաս գին ունեցող պետական կալվածքները կվաճառվեն կանխիկ։ Մյուս պետական կալվածքները կարելի է վաճառել տարաժամկետումով, ընդ որում վճարման ժամկետը չպիտի լինի ավելի քան հինգ տարի, այն պայմանով, որ գնի առնվազն մեկ քառորդ վճարի կանխիկ և այն էլ լինի ոչ պակաս, քան 10 հազար ռիալ[3]։ Այս պայմաններից պարզորեն երևում է, որ գյուղացիության լայն մասսաները հույս անգամ չէին կարող ունենալ հող ձեռք բերելու համար։

---

[1] *A. K. S. Lambton*, Landlord and Peasant in Persia, London, 1953, page 252.

[2] (ایران) «Իրան», 1934, հունվարի 7։

[3] Օրենսդրական 9-րդ նստաշրջանի սահմանած և վավերացրած օրենքների ժողովածու قوانين موضوعه و مستند مصوبه دوره نهم تقنينيه.

Այդ օրենքի հետևանքով վաճառված պետական հողերի քանակը երևում է այն փաստից, որ 1315 (1936—1937) թ. պետական բյուջեում խալիսեջաթե էնթեղալի հողերի վաճառքից ստացված եկամուտը 2 միլիոն ռիալ է ցույց տրված։ Պետական հողերի վաճառքից գյուղացիական հոծ մասսաների բաժին չստանալը ավելի վառ կերպով է արտահայտում 1937 թ. նոյեմբերի օրենքը Թեհրանի շրջակայքի խալիսե հողերի վաճառման մասին։ Այդ օրենքի 3-րդ հոդվածում ասվում է, որ «50 հազար ռիալ կամ պակաս գին ունեցող բոլոր պետական կալվածքները կվաճառվեն կանխիկ, մյուս պետական կալվածքները կարելի է վաճառել տարաժամկետումով, ընդ որում վճարման ժամկետը չպիտի լինի ավելի քան հինգ տարի, այն պայմանով, որ գնի առնվազն մեկ քառորդը վճարվի կանխիկ և.այն էլ լինի ոչ պակաս, քան 50 հազար ռիալ»[2]։ Կալվածքի նվազագույն գինը սահմանվում էր 10 անգամ ավելի, քան երեք նախորդ տարիների տարեկան միջին բերքի արժեքի չափը։

Այս ձևերով Ռիզա շահի միապետությունը ընդարձակում էր կալվածատիրական հողատիրությունը, ապահովելով պետական հողերի անցումը միայն ֆեոդալ-կալվածատերերի ձեռքը։ Վերջին օրենքը հրատարակվելու ժամանակ միայն Թեհրանի շրջակայքում կային ավելի քան 200 խալիսե գյուղեր, որոնցից մոտ 150-ը վաճառվեց։

Պետական հողերի վաճառման նշված օրենքների հետևանքով Իրանական Ադրբեջանի, Արաքի, Խորասանի և Քուրդիստանի պետական հողերի մեծ մասը վաճառվեց կալվածատերերին։

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ բացի պետական հողերի վաճառքի տենդենցից, տեղի էին ունենում նաև հակառակ երևույթներ։ Ռիզա շահի թագավորության սկզբի տարիներին պետության կենտրոնացման համար մղված պայքարի ընթացքում հսկա քանակությամբ հողեր բռնագրավվեցին կենտրոնախույս և խռովարար ֆեոդալներից, խաներից և այլն։ Այդ թվում ընդարձակ կալվածքներ Խուզիստանում՝ Շեյխ Խազալից, Քուրդիստանում և Մակվում՝ Ամիդկոյից։ Որոշ դեպքերում բռնագրավված հողերի դիմաց կալվածատերերին նոր հողեր էին տրվում երկրի այլ մասերում։ Այդ բռնագրավումները կոչվում էին պարզորեն թոդիֆ (توقيف)[1] կայանք, այսինքն հարկերի չվճարման դիմաց կատարված բռնագրավումներ, որպեսզի լոկ բռնագրավումների (մոսադրե — مصادره) բնույթ չկրի։

Այժմ տեսնենք ինչքան տարածություն էին կազմում պետական հողերը. որքան էր նրանց տեսակարար կշիռը երկրի ընդհանուր վարելահողերի ֆոնդում, և վաճառքի այդ ոգաշահյան օրենքների կիրառումից հետո ինչքան պետական հողեր մնացին։

1930-ական թվականներին պետական՝ խալիսե հողերի քանակի մասին կարելի է պատկերացում ունենալ հետևյալ աղյուսակից։ Նշենք Իրանի մի քանի նահանգներում խալիսե հողերի քանակը.

Ադրբեջան 360 գյուղ 5527 գյուղից, կամ 6,5 տոկոս.

Մազենդարան 96 գյուղ 1236 գյուղից, կամ 7,8 տոկոս.

---

[1] *A. K. S. Lambton*, Landlord and Peasant in Persia, London, 1953, page 240.

[2] Օրենսդրական 11-րդ նստաշրջանի սահմանած և վավերացրած օրենքների ժողովածու. էջ 2։ مجموعه قوانين موضوعه و مسائل مصوبه دوره يازدهم تقنينيه ص ۲

Քերմանշահ 79 գյուղ 540 գյուղից, կամ 14,6 տոկոս.

Թեհրան 175 գյուղ 1216 գյուղից, կամ 14,3 տոկոս.

Քաշան 52 գյուղ 145 գյուղից, կամ 35,8 տոկոս.

Աստարաբադ 103 գյուղ 275 գյուղից, կամ 37,4 տոկոս.

Սիստան 170 գյուղ 170 գյուղից, կամ 100 տոկոս[1]։

Մ. Քեյհանը իր «Իրանի ընդարձակ աշխարհագրությունը» գրքում գրում է, որ 30-ական թվականներին գրանցված խալիսե գյուղերի թիվը 1345 էր։ Բայց դա ամբողջ խալիսեի ընդհանուր գումարը չէր, այլ միայն այն մասը, որը գյուղերի սահմանների մեջ էր մտնում։ Օրինակ՝ Խուզիստանում, հարավի նավահանգստներում, Ղոմում, Մահալաթում, Աստարաբադում, Գիլանում և Սեմնանում պետությունը ընդարձակ հողեր ունի, որոնք դրա մեջ չեն մտնում[2]։

Վաճառքի օրենքները կիրառելու հետևանքով վերոհիշյալ և ուրիշ նահանգների բազմաթիվ խալիսե հողերից, Ռիզա շահի գահընկեցությունից հետո, 1941 թ. մնացել էր ընդամենը 816 գյուղ։ Այդ գյուղերը իրենց ծագումով բաժանվում էին երեք խմբի։ Առաջին՝ կենտրոնախույս խռովարար ֆեոդալների հողերը, որոնք խլվել էին նրանց ձեռքից, իրենց շրջանում նրանց ազդեցությունը չեզոքացնելու համար. ինչպես, օրինակ՝ Իսմայիլ Սմիթկոյի հողերը՝ Մակվում, Նաիբ Հուսեյին Քաշանիի հողերը՝ Քաշանում։ Երկրորդ՝ պետության գանձարանին պարտք ունեցող կալվածատերերի բռնագրավված հողերը. այդ թվում հարկեր հավաքող բայց գանձարան չմուծող նահանգապետների կալվածքները. և երրորդ՝ ժառանգ չունեցող ֆեոդալական արիստոկրատիայի հողերը, ինչպես, օրինակ՝ պետական հողերի նշանակալից մի մասը կազմող Հաջի Միրզա Աղասու հողերը։

Խալիսե հողերի քանակը բավականին աճեց Ռիզա շահի գահընկեցությունից հետո, որովհետև նրա ամբողջ հողային սեփականությունը անցավ պետությանը և մտավ խալիսե հողերի ֆոնդի մեջ։ Այսպիսով պետական գյուղերի թիվը դարձավ 8 841, որից 8 025-ը շահի նախկին կալվածքներն էին[3]։

Իսկ ինչպե՞ս էր շահը ձեռք բերել այդ կալվածքները։

Ներկայումս Իրանի ամենախոշոր կալվածատերը Իրանի շահ Մոհամեդ Ռիզա Փահլավին է։ Այդ հողերը նա ժառանգաբար ստացել է իր հորից՝ Ռիզա շահից։ Շահի հողերը ոչ մի կապ չունեն նախկինում Իրանում եղած դիվանի, կամ արքունի հողային ինստիտուտի հետ. այլ այդ կալվածքները ամբողջովին ձեռք են բերվել Ռիզա շահի օրոք։ Հայտնի է, որ երբ Ռիզա խանը 1925 թ. գահ բարձրացավ, ոչ մի հողային սեփականություն չուներ, բայց երբ 1941 թ. գահընկեց արվեց, նա Իրանի ամենախոշոր կալվածատերն էր։ Ռիզա շահը իր այդ հսկայական կալվածքները ձեռք էր բերել տարբեր եղանակներով։ Նախ, իր իշխանության սկզբում, երբ պայքար էր մղում կենտրոնախույս ֆեոդալների դեմ, այդ ֆեոդալների ոչնչացումով նրանց հսկայական հողերը բռնագրավվեց։ Այնուհետև նա մեծ կալվածքներ ստացավ, այսպես կոչված, «փիշ-

[1] „Материалы по национально-колониальным проблемам", сборник № 34, М., 1936, стр. 127.

[2] Մ. Քեյհան, Իրանի ընդարձակ աշխարհագրություն, մաս 3, տնտեսություն, էջ 86։
مسعود کیهان جغرافیای مفصل ایران قسمت ۳ اقتصادی ۱۳۱۱ ص ۸۶.

[3] (اطلاعات) «Էթթելաաթ», 1946, 24 հունիսի։

քաշի» ձևով, երբ այս կամ այն կալվածատերը այնպիսի դրության մեջ էր դրվում, որ ստիպված էր լինում իր կալվածքներից որևէ մեկը «նվեր» տալ շահին։ Այդ մասին վկայում է մինչև իսկ ռեակցիոն Միլիսպոն. «Ռիզան,— գրում է նա,— սկսում է գյուղեր ստանալ որպես «նվեր», «նվերներ», որոնք տրվում էին կամ հարկադրանքից կամ էլ վախից»[1]։ Այնուհետև, պետական-խալիսե հողերը մասնավոր անձանց վաճառելու ժամանակ, գնման անվան տակ այդ հողերի նշանակալից մասը վերցրեց ինքը՝ Ռիզա շահը։ Ռիզա շահի ամբողջ հողային սեփականության մեջ նշանակալից տեղ էին գրավում հենց այդ, այսպես կոչված, «գնված» խալիսե հողերը։ Պաշտոնական տվյալների համաձայն Ռիզա շահը իր թագավորության տարիներին ֆինանսների մինիստրությունից «գնեց»՝ Քերմանում 133 գյուղ, Քերմանշահում 142 գյուղ, Խորասանի Բոջնուրդում 128 գյուղ, Բաբոլի և Ամոլի շրջաններում 106 գյուղ և, վերջապես, մոտ 750 արոտավայր Բաբոլում։ Բացի այդ, Ռիզա շահը ֆինանսների մինիստրությունից «գնեց» այն մասնավոր հողերը, որոնք բռնագրավվել էին պետության կողմից և փոխհատուցվել մասամբ պետական հողերով՝ Բաբոլում և Ամոլում 108, Վարամինում 3, Քերմանում 6 գյուղ, և 375 արոտավայր Բաբոլի և Ամոլի շրջաններում։ Ռիզա շահը մեծ կալվածքներ ձեռք բերեց նաև կալվածատերերից, հողեր «գնելով»։ Պաշտոնական տվյալներով Ռիզա շահը կալվածատերերից մանր հողատերերից և բանկային հիմնարկներից «գնեց» 6 246 գյուղ, մշակելի հողամասեր և արոտավայրեր Մազենդարանում, Խորասանում, Քեռմանշահում, Վարամինում, Սուլթանաբադում, Դեմավենդում և Ղազվինում[2]։ Հատկապես Մազենդարանի նահանգի հողերի մեծ մասը դարձավ Ռիզա շահի սեփականությունը։ Ընտիր կալվածքներ ձեռք բերելու համար Ռիզա շահը կիրառում էր նաև մի ուրիշ մեթոդ, երբ կալվածատերերին ստիպում էր իրենց կալվածքները «փոխել» երկրի մի ուրիշ մասում գտնվող կալվածքի հետ։ Օրինակ, Մազենդարանի շատ կալվածատերեր ստիպված եղան իրենց ընտիր հողերը տալ շահին և դրա դիմաց այլ հողեր ստանալ երկրի ուրիշ նահանգներում։

Բոլոր այս հողերը գրանցվեցին որպես Ռիզա շահի անձնական սեփականություն և կոչվեցին ամլաքե շահ (املاک شاه)։ Այսպիսով, Ռիզա շահը բռնագրավեց և յուրացրեց հսկայական տարածությամբ հողեր Մազենդարանում, Խորասանում, Կենտրոնական Իրանում և դարձավ երկրի ամենախոշոր կալվածատերը։ Նշենք թեկուզ, որ միայն Խորասանում շահի ունեցած կալվածքները գնահատվում էին մոտ 250 միլիոն ռիալ։ Նա տիրում էր մոտ մեկ միլիոն հեկտար անտառի և որպես անտառի սեփականատեր «հավանաբար խոշորագույնն էր աշխարհում»[3]։

Պաշտոնական տվյալների համաձայն Ռիզա շահի գահընկեցության ժամանակ նրան էին պատկանում 8 025 կալվածքներ[4]։

[1] *A. C. Millspaugh*, Americans in Persia, Washington, 1946, page 25.

[2] (اطلاعات) «Էթթելաաթ», 1946, հունիսի 24։

[3] „Middle East Journal", 1952, № 3, page 229.

[4] (اطلاعات) «Էթթելաաթ», 1946, հունիս 23։ Մոսադդիկը 1953 թ. նոյեմբերին իր դատավարության ժամանակ ասաց, որ այդ կալվածքները 5600 են եղել։ Հավանաբար նա նկատի է ունեցել միայն գյուղերը և հաշվի չի առել անտառներն ու արոտավայրերը և այլն։ (اطلاعات) «Էթթելաաթ», 1953, նոյեմբերի 10։

Իր այդ կալվածքները կառավարելու համար Ռիզա շահը ստեղծել էր մի հսկա ապարատ, որը կոչվում էր էդարեյե ամլաք (اداره املاک)։ Այդ ապարատը կառավարում էին նրա կողմից նշանակված գեներալները և ուրիշ պաշտոնյաներ։ Ռիզա շահի կալվածքներում փաստորեն իշխում էր ճորտային ռեժիմը։ Շաբաթը ոչ պակաս քան կեսը գյուղացիները անվարձ կերպով, վաղ լուսաբացից մինչև ուշ երեկո աշխատում էին շահի հողերում, ստիպված իրենց տնտեսությունների ավելցուկները բավական ցածր գներով տալիս էին շահին և կատարում էին բազմաթիվ այլ պարտավորություններ։ Գյուղացու ինքնակամ հեռացումը շահի հողից համարվում էր պետական հանցանք։ Կալվածքների կառավարչի հրամանները ժամանակին չկատարելու համար գյուղացիներին ծեծում էին, կամ էլ բանտերը նետում։ Բնորոշ է նշել թեկուզ այն, որ Ռիզա շահը Մազենդարանի մշակելի հողերից վերցնում էր բերքի մեկ երրորդ մասը և ամեն մի ջարիբից 12—15 թուման, այն ժամանակ, երբ մյուս կալվածատերերը ամեն մի ջարիբից գանձում էին 5 թուման։ Հետաքրքրական է, որ մինչև իսկ Միլիսպոն ստիպված է խոստովանել, որ «Ռիզա շահը դաժանորեն շահագործում էր գյուղացիներին...»[1]։

«Ռիզա խանը,— գրում է «Զեդդե էսթեհմար» իրանական թերթը,— քսան տարի շարունակ երկրում գողությամբ և թալանով էր զբաղված։ Իրանի վարելահողերի մի ընդարձակ մասը սվինի ուժով տիրացավ և նրանից ստացած տասնյակ միլիոն եկամուտը օտարերկրյա բանկերը փոխադրեց»[2]։ Միայն օտարերկրյա բանկերում նրա ունեցած հարստությունը կազմում էր մոտ 20 միլիոն դոլլար[3]։

Ռիզա շահի կողմից բռնագրավված այդ հողերը, նրա գահընկեցությունից հետո, 1941 թ. անցան նրա որդուն՝ Մոհամեդ Ռիզային, որը ներկայումս Իրանի շահն է։ Ռիզա շահի նկատմամբ ժողովրդական զայրույթը այնքան ուժեղ էր, որ նոր շահը այդ հողերը ձեռքից չտալու համար, 1941 թ. սեպտեմբերի 21-ի հրամանով, ամբողջ իր կալվածքները փոխանցեց պետությանը[4]։ Այդ հողերը կառավարելու համար ֆինանսների մինիստրությունում հատուկ վարչություն ստեղծվեց։ Քանի որ այդ կալվածքները շահի կողմից պետությանն էին տրվել, ապա նախկին տերերի մեջ հույսեր առաջացան վերականգնելու իրենց սեփականատիրական իրավունքները։ 1942 թ. հունիսի 2-ին Մեջլիսը մի օրենք անցկացրեց այդ հողերը նախկին տերերին վերադարձնելու մասին։ Ըստ այդ օրենքի արդարադատության մինիստրության մեջ հատուկ մարմին ստեղծվեց դիմումները և սեփականատիրական հավակնությունները քննարկելու և բավարարելու համար։ Այդ կալվածքները, որոնք հայտնի դարձան որպես ամլաքե վագուզարիյե Փահլավի (املاک واگذاری پهلوی) բաժանվեցին չորս կատեգորիայի. առաջինը այն հողերը, որոնք գնվել էին նախկին տերերից 10 հազար ռիալից ավելի գնով. երկրորդ՝ այն հողերը, որոնք փոխանակվել էին երկրի ուրիշ շրջաններում գտնվող կալվածքների հետ, երրորդ՝ այն հողերը, որոնք ուղղակի բռնագրավվել էին, և չորրորդ

[1] *A. C. Millspough,* Americans in Persia, Washington, 1946, page 25.

[2] (ضد استعمار) «Զեդդե էսթեհմար», 1952, օգոստոսի 17։

[3] *A. C. Millspaugh,* Americans in Persia, Washington, 1946, page 34.

[4] (کوشش) «Քուշեշ», 1942, հունվարի 27։

այն հողերը, որոնք գնվել էին նախկին տերերից 10 հազար ռիալից պակաս գնով։ Երրորդ և չորրորդ կատեգորիայի հողերից շատերը վերադարձվեցին իրենց նախկին տերերին, պաշտոնական հրամանով կամ առանց հրամանի։ Եթե հրաման տրված լիներ, ապա հողը դուրս էր գրվում շահի կալվածքների ընդհանուր ցուցակից, իսկ եթե առանց հրամանի էր, ապա հարցը շարունակվում էր դատարանում քննվել, չնայած որ, փաստորեն, նախկին տերը արդեն վերականգնել էր սեփականությունը։ Բայց եթե հետագայում դատարանը վճռեր ի փաս կալվածատիրոջ, ապա ոչ միայն այդ հողը նրանից հետ պիտի վերցվեր, այլև պիտի գանձվեր այն ամբողջ եկամուտը, որ կալվածատերը ստացել էր փաստորեն հողը վերստանալուց մինչև դատարանի վճիռը։ Ըստ օրենքի, առաջին և երկրորդ կատեգորիայի հողերի հարցը պետք է քններ դատարանը։ Եթե դատարանը որոշեր հօգուտ շահի, ապա կալվածքը դառնում էր խալիսե։ Մոտ 170 հարց դատարանում լուծվեց հօգուտ շահի։ Երկրորդ կատեգորիայի կալվածքների նկատմամբ հարց ներկայացնելու դեպքում պահանջվում էր, որ նախկին տերը փոխարինարար ստացած կալվածքը իր սեփականության տակ ունենար, այլապես դիմումը քննարկման ենթակա չէր կարող լինել[1]։ Մինչև 1944 թ. կալվածքները հետ պահանջելու կապակցությամբ ներկայացվել էին մոտ 9 հազար գիմումներ[2]։ Իրենց կալվածքները հետ էին պահանջում նաև այն կալվածատերերը, որոնց հողերը բռնագրավվել էին ֆինանսների մինիստրության կողմից և հետո վաճառվել շահին։ Այդ դիմումները նույնպես երկար տարիներ քննվում էին դատարանում։

Խոսելով շահի կողմից կալվածքները պետությանը փոխանցելու և նախկին տերերին վերադարձնելու դատական պրոցեսների մասին, իրանական «Բանգե մարդոմ» թերթը գրում է. «Շահրիվարի երեքից հետո (1941 թ. օգոստոս 25) նոր շահը ժողովրդական ճնշման ներքո և միևնույն ժամանակ դեմագոգիայի նպատակով հոր կալվածքները պետությանը հանձնեց, որպեսզի քննելուց և գինը ստանալուց հետո իսկական տերերին վերադարձվեն։ Չնայած այդ կալվածքները մոտ 8 տարի պետության տրամադրության տակ մնացին և երկար ու լայն դատարաններ ու բազմաթիվ հիմնարկներ զբաղված էին դիմումների քննումով, այդուհանդերձ այդ բռնագրավված հողերից միայն մի քանի կտոր վերադարձվեցին իսկական տերերին, իսկ մնացածը մնաց պետության ձեռքում...»[3]։

1949 թ. շահը, երկրում տիրող ռեակցիայի պայմաններում իրեն ամուր զգալով՝ Մեջլիսում մի օրենք անցկացրեց (1949 թ. հուլիս 11), որի համաձայն կալվածքները վերադարձվում էին շահին, որպես Փահլավի ընտանիքի վակֆ։ Այդ հողերը պետք է կառավարվեին, այսպես կոչված, «էդարեյե ամլաքե մոկուֆեյե Փահլավի» (ادارهٔ املاك موقوفهٔ پهلوی), այսինքն Փահլավի վակֆային կալվածքների կառավարչության կողմից, իսկ եկամուտները պետք է հատկացվեին «բարեգործական» նպատակների։ Համաձայն այդ օրենքի շահին վերադարձվող կալվածքների տարածությունը կազմում էր մոտ 2 միլիոն ջարիբ (ջարիբը հավասար է 1400 քառ. մ), որի վրա աշխատում էին մոտ 250 հազար

---

[1] A. K. S. Lambton..., page 257.

[2] (ایران) «Իրան», 1944, մայիսի 31։

[3] (بانك مردم) «Բանգե Մարդոմ», 1953, մայիսի 13։

գյուղացիներ[1]։ Այդ կալվածքները, ըստ որոշ աղբյուրների, 12 միլիոն ստերլինգ արժողություն ունեին[2]։ Իսկ կալվածքներից ստացված եկամուտների մասին ստույգ տեղեկություններ չկան, քանի որ շահի պալատը ամեն գնով թաքցնում էր այդ։ Բայց համաձայն Թեհրանում ամերիկյան դեսպանության կցորդ Գեղեոն Հադարիի տվյալների, 1949—1950 թթ. այդ հողերից ստացված ընդհանուր եկամուտը եղել է 737 միլիոն ռիալ, որից գյուղացիների բաժինը կազմել է ընդամենը 157 միլիոն ռիալ։ Բացի այդ անտառներից և թփուտներից ստացված եկամուտը կազմում էր մոտ 40 միլիոն ռիալ, որը հավասար բաժանվում էր կալվածքների կառավարչության և գյուղատնտեսական մինիստրության անտառային վարչության միջև[3]։

Վերջին տարիներին շահը ձեռնամուխ եղավ իր կալվածքների վաճառքին, որին մենք կանդրադառնանք մի այլ առիթով։

Հետպատերազմյան տարիներին կառավարությունը մի քանի օրենքներ հրատարակեց մնացած խալիսե հողերի վաճառքի համար. օրինակ՝ Կավամ էս-Սալթանեն մի օրենք հրատարակեց 1946 թ. հուլիսի 6-ին և երկու լրացումներ՝ 1946 թ. հուլիսի 13-ին և նոյեմբերի 3-ին. մի այլ օրենք էլ Մեջլիսը անցկացրեց 1949 թ. հուլիսին։ Բայց այդ օրենքները մնացին թղթի վրա և ելնելով մի քանի վաճառքներ եղան, ապա դրանք, ինչպես խոստովանում է 1948—1950 թթ. Թեհրանում ամերիկյան դեսպանության կցորդը. «...այնպիսի հողաշերտեր էին, որոնք սպեկուլյատիվ արժեք ունեին, և պրոյեկտը ոչ մի օգուտ չտվեց գյուղացիներին»[4]։ Վերջապես 1955 թ. Զահեդիի կառավարությունը մի օրենք ներկայացրեց Մեջլիսին՝ խալիսե հողերի վաճառքի վերաբերյալ։ Այդ օրենքը ներկայացնելուց առաջ, բացի շահի հողերից, Իրանի խալիսե հողերը 1954 թ. ներկայացնում էին հետևյալ պատկերը։ Ըստ նույն ամերիկյան աղբյուրի, պետական հողերի տարածությունը բաժանված էր 1800 միավորի, որի վրա ընակվում էին մոտ 750 հազար հոգի։ Դրա մեկ երրորդ մասը Ահվազի շրջանում էր[5]։ Այս տվյալները մոտավորապես համընկնում են իրանական աղբյուրների տվյալներին։ Իրանական պաշտոնական «Էթթելաաթ» թերթի հաղորդման համաձայն պետական կալվածքների թիվը հասնում էր 1786-ի, որի մեծ մասը Իրանական Ադրբեջանում, Խորասանում, Սիստանում, Արևմտյան Բլուջիստանում և Թեհրանի շրջակայքում էր գտնվում[6], 1946 թ. ֆոնդի համեմատ պետական հողերը այսպիսի աճ ունեցան, որովհետև շահի կալվածքների մի մասը մնաց խալիսեի ֆոնդում։

Այժմ մի քանի խոսք խալիսե հողերի շահագործման եղանակների մասին։

Իրանում խալիսե կամ պետական հողերը մինչև վերջերս գտնվում էին

---

[1] Այդ մասին 1954 թ. վերջին շահը հայտարարեց ԱՄՆ-ում։ (اطلاعات) «Էթթելաաթ», 1954 դեկտ. 18։ Ամերիկյան „Middle East Affairs, 1954, vol. V, № 10, page 314"-ը գրում է, որ կալվածքների տարածությունը 750 հազար ակր է, որը իրիդացիայով կարելի է հասցնել մինչև 1,25 միլիոն ակրի, և որ այդ կալվածքներում աշխատում են մոտ մեկ միլիոն գյուղացիներ։

[2] „Industry and Labour", 1951 Aug. vol. VI, № 3, page 138.

[3] „Middle East Journal", 1951, № 2, page 186.

[4] Նույն տեղում, էջ 191։

[5] Նույն տեղում, էջ 185—186։

[6] (اطلاعات) «Էթթելաաթ», 1953, նոյեմբերի 4։

ֆինանսների մինիստրության մի հատուկ դեպարտամենտի և նահանգներում ֆինանսական վարչությունների բաժանմունքների տրամադրության տակ։ Միայն 1955 թ. հունվարին Զահեդիի կառավարությունը այդ հողերի տնօրինումը փոխանցեց գյուղատնտեսական մինիստրությունը։ Այդ հողերը Դարայի կամ Մալիյի (دارایی یا مالیه) կոչվող տեղական ֆինանսական մարմինների կողմից վարձով էին տրվում խոշոր և մանր կալվածատերերին, չինովնիկներին կամ առևտրականներին, որոնք հաճախ անձամբ չմշակելու դեպքում իրենց հերթին վարձով էին տալիս ուրիշներին[1]։

Խալիսն հողերի վարձակալության մասին խիստ կարգ մտցվեց 1930 թ.։ 1930 թ. ապրիլի 20-ին ֆինանսների մինիստրությունը մի նոր շրջաբերականով խստորեն պարտադրեց բոլոր համապատասխան ֆինանսական օրգաններին պետական հողերը վարձով տալ։ Այդ շրջաբերականում ասվում էր. «Կառավարության որոշման համաձայն կարգադրվում է առկա բոլոր պետական կալվածքները և գույքը վարձով տալ այնպիսի պայմաններով, որ վարձակալը բոլոր ծախսերը իր վրա վերցնի։

Կանոնադրության կարևոր կետերը հետևյալներն էին.

1) Ժամանակավոր օգտագործման տակ գտնվող և վարձով չտրված բոլոր պետական կալվածքների (խալիսն) համար պետք էր աճուրդ հայտարարել։ Վարձակալության նվազագույն ժամկետը երեք տարի էր, իսկ առավելագույնը 10 տարի։

2) Վարձակալը պետք է մի հաստատուն երաշխավոր ներկայացներ։

Կանոնադրության 13-րդ կետում ասվում էր, որ այդ շրջաբերականը չի վերաբերում Թեհրանի և Սիստանի խալիսն հողերին։

Գյուղացիները ֆինանսների վարչությունից հողը վարձում են երկու ձևով։ Վարձակալությունը լինում է կամ մեկ տարով, կամ երկարատև ժամկետով (3—5 տարով), որը հաճախ մնում է նաև ժառանգաբար։

Խալիսն հողերը սուբարենդային պայմանով կալվածատերերին է տրվում երկու եղանակով. կամ աճուրդով հողի եկամուտը ստանալու իրավունքն է վարձով տրվում 3—5 տարի ժամկետով, կամ էլ բերքը նախապես վաճառվում է գնահատելուց հետո։

Խուզիստանում ներկայումս բավական խալիսն հողեր կան Շուայբի և Ահվազի միջև ընկած տերիտորիայում, Դաշթե Միշանում, Խոռամշահր-Արադանի շրջանում, Զուղամշում և Իջայուրում՝ Դիզֆուլի շրջանում։ Հինդիջանում կառավարությունն ինքն է մշակում հողը, իսկ մյուս վայրերում վարձով է տալիս։ Որոշ մարզերում վարձի գումարը սահմանվում է ամեն տարի մոմալիզի՝ գնահատողի կողմից։ Ահվազի մոտ գտնվող Քուլթ Արդուլահում 1945 թ. կալվածատերերին տրվող խալիսն հողերի վարձակալության պայմանները հետևյալներն էին. առաջին չորս տարում կառավարությունը ոչ մի բան չի պահանջում, երկրորդ չորս տարում կառավարությունը վերցնում է ամբողջ բերքի 3 տոկոսը, երրորդ չորս տարում՝ 10 տոկոսը, չորրորդ չորս տարում՝ 12 տոկոսը և հինգերորդում՝ 15 տոկոսը։ Վարձակալը պարտավորվում է առաջին չորս տարվա ընթացքում մի ջրապոմպ կառուցել և ոռոգման միջոցով հողը մշակելի դարձնել[2]։ Ինչպես տեսնում ենք, պայմանները բավականին թեթև են,

[1] „Middle East Journal", 1951, № 2, page 186.
[2] *A. K. S. Lambton*..., page 254.

որը հնարավորություն է տալիս վարձակալ-կալվածատիրոջը հսկայական եկամուտներ ստանալ, քանի որ այդ նույն հողը մշակող գյուղացին ստիպված է վարձակալին տալ ամբողջ բերքի 60—80 տոկոսը։ Իրանական պաշտոնական «Էթթելաաթ» թերթը հաշվել է, որ ամեն մի հեկտարից բերքը կազմում է ընդամենը կես տոննա, որի տոննան 2 600 ռիալ հաշվելով, կազմում է 1 300 ռիալ։ Այդ գումարից կալվածատերը գանձում է 950 ռիալ, իսկ գյուղացուն մնում է հեկտարից ընդամենը 350 ռիալ[1]։

Շատ ծանր է նաև Բլուչիստանի խալիսե հողերում աշխատող գյուղացիների դրությունը։ Բլուչիստանի Իրանշահրում և Իամփուրում խալիսե 22 գյուղեր կան. Խաշում 8 գյուղ, որոնք մինչև վերջերս վարձով էին տրվում, իսկ այժմ կառավարությունը ինքն է ղեկավարում։ Թե ինչ դրություն է տիրում այդ գյուղերում, կարելի է հասկանալ «Էթթելաաթ»-ի հետևյալ հաղորդագրությունից. «Գյուղացիներն ընդհանրապես աննկարագրելի թշվառ և չքավոր վիճակում են ապրում, այնպես որ տարվա ընթացքում 6 ամիս խոտ են ուտում, կամ էլ մի քիչ արմավ և արմավի կորիզ։ Հայրենակիցներին և հարգելի ընթերցողներին տեղյակ պահելու համար ստիպված ենք բաց անել այն իրականությունը, որ բլուջներից շատերը սաստիկ թշվառության և չքավորության հետևանքով, կին ու տղամարդ նախամարդկանց և Ադամ-Եվայի պես մերկ են ապրում անապատներում»[2]։

Բացի վարելահողերից, երկրի մի շարք շրջաններում, հատկապես Սիստանում և Ադրբեջանում պետությունն ունի նաև արոտավայրեր։ Սիստանում անասնապահները իրենց հոտերը արածացնում էին պետական արոտավայրերում և վճարում էին հակ-օլ-մարթա (արածացնելու վարձ)՝ յուրաքանչյուր գլուխ անասունին 2 ռիալ։ 1946 թ. հետո այդ արոտավայրերը բռնագրավվեցին տեղական ասլդարների կողմից, որոշ դեպքերում էլ ֆինանսների մի նիստությունը դրանք մշակելի դարձնելու նպատակով վարձով տվեց։ Ռենտան նշանակվեց բերքի $^1/_8$ մասը։ Բայց այդ հողերը չմշակվեցին, և ռենտան էլ չվճարվեց։ Վարձակալները, փոխանակ ըստ պայմանագրի հողը մշակելու, ավելի մեծ ռենտայով, որպես արոտավայր, վարձով տվեցին անասնապահներին, այն պարագայում, երբ պետությունը շարունակում էր անասնապահներից յուրաքանչյուր գլուխ անասունի համար 2 ռիալ գանձել։

Ադրբեջանում Սահանդ լեռան փեշերի, Մուղանի դաշտի և այլ արոտավայրերը խալիսե են և շահսևանների յեյլաղն ու կիշլաղն են կազմում։ Կառավարությունն այդ արոտավայրերը կամ վարձով է տալիս, կամ էլ հակ-օլ-մարթա (արածացնելու վարձ) է գանձում։

* * *

Ինչպես տեսնում ենք, ժամանակակից Իրանում խալիսե հողերը չնչին տարածություն են ներկայացնում։ 1957 թ. նոյեմբերին հաստատված պետական հողերի վաճառքի կանոնադրության իրականացումով խալիսեի ինստիտուտը վերջնականապես կլիկվիդացվի Իրանում։

---

[1] (اطلاعات) «Էթթելաաթ», 1958, հուլիսի 16։

[2] Նույն տեղում, սեպտեմբերի 9։